ԱՃՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Կյանքի Բուժող Ընտրությունները
Մաս 7

Աճման Ընտրություն: Վերապահում եմ ամենօրյա ժամ Աստծո հետ, ինքնաքննության համար, Աստվածաշունչ կարդալու և աղոթելու համար, որպեսզի իմանալ Աստծու կամքը իմ կյանքի համար և ստանալ Իր կամքին հետևելու զորությունը:

«Աճեցեք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհքովը և գիտությունովը.» Բ Պետրոս 3:18

Ինչպե՞ս Շարունակել Աճել

1. Ամեն օր ժամանակ հատկացնեմ Աստծո հետ

«Եվ հիմա որդյակներ, կացեք նրանում...» Ա Հովհաննես 2:28

«Ամեն ով որ նրանում մնում է՝ չի մեղանչում...» Ա Հով 3:6

«Աղոթքին միշտ հետևեք. և արթուն կացեք նրանում գոհությունով:» Կողոսացիս 4:2

2. Միտքս զբաղեցնեմ Աստվածաշունչի համարներով

«Նա որ ազատության կատարյալ օրենքի մեջ աչքը գցած մտիկ տվավ և նրանում կացավ, նա մոռացուկ լսող չեղավ այլ գործ կատարող. նա իր անելովը երանելի է:» Հակոբոս 1:25

«Եթե դուք իմ խոսքի մեջ կենաք, ճշմարտապես իմ աշակերտներն էք: Եվ ճշմարտությունը կճանաչեք. և ճշմարտությունը կազատի ձեզ:» Հովհաննես 8:31-32

3. Կենտրոնանամ նպատակիս և ոչ թե սովորությանս վրա

«Ոչ թե արդեն հասել եմ կամ թե արդեն կատարյալ եմ, այլ ձգտում եմ, որ թերևս հասնեմ նրան, ինչով Քրիստոս Հիսուսի կողմից բռնվեցի::» Փիլիպպեցիս 3:12

«Ես ինձ չեմ համարում, որ հասել եմ, բայց մի բան կա. հետևում թողածը մոռանալով՝ դեպի առջևում եղածներն եմ ձգտում: Հետևում եմ նպատակակետին՝ Հիսուս Քրիստոսով դեպի վեր՝ երկինք՝ Աստծու կողմից կոչվելու մրցանակին:» Փիլիպպեցիս 3:13-14

4. Արագորեն դիմագրավեմ և թողնեմ սայթաքումները

«Քննենք մեր ճանապարհները և փորձենք, և ետ դառնանք Տիրոջը:» Երեմիայի Ողբերը 3:40

«Որովհետև եթե մեր անձերը դատեինք, չէինք դատապարտվել:» Ա Կորնթացիս 11:31

5. Փախչեմ գայթակղությունից, բայց չվախենամ դրանից

«Արթուն եղեք, հաստատ կացեք հավատքումը. արիացեք և ուժվացեք:» Ա Կորնթացիս 16:13

«Մի խաբվեք. չար ընկերակցություններն ապականում են բարի վարքերը:» Ա Կորնթացիս 15:33

6. Ունենամ մշտական աջակցող խումբ

«Որ այնպիսի մահից մեզ փրկեց և փրկում էլ է. Որին հույս ունենք՝ թե տակավին կփրկի էլ ձեզ մեզ համար արած աղոթքի օգնականությամբ...» Բ Կորնթացիս 1:10-11

«Չթողենք մեր իրար հետ ժողովվելը, ինչպես ոմանց սովորություն է. բայց իրար հորդորենք...» Եբրայեցիս 10:25

7. Հետևեմ Հիսուսին մինչև վերջնագիծը

«Հաստատ համոզված եմ սրան, թե նա որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը:» Փիլիպպեցիս 1:6

«Եվ չձանձրանանք բարին գործելուցը, որովհետև իր ժամանակին կհնձենք՝ եթե չթուլանանք:» Գաղատացիս 6:9

Հաջորդ Կիրակի: Հովիվ Սարօ Խաչիկեան

ԲԱԺՆԵԿՑԵԼՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի Բուժող Ընտրությունները